

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

13 դեկտեմբերի 2018թ.
ք.Երևան

N 170-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔՎԵԱՐԿՎԱԾ «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ
ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 27-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ Աշոտ Սիմոնյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Թույլատրել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում կատարել քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության նախորդ օրը կատարված գործարքների համար՝ 792 952 (յոթ հարյուր ինսուներկու հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամի չափով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ